

Ա. Գ. ՇԱՆԻՁԵ
(Ծննդյան 90-ամյակի առթիվ)

ՀԱՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆ, Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ


Արևմտյան Վրաստանի նորա գյուղում ծնված Ակակի Շանիձեն նախնական գրաճանաչությունը սաղմոսերգու հորից ու երեք եղբայրներից հր սովորել, ապա հաճախել տեղի ծխական դպրոցը: 1897 թ. տասնամյա Ակակին ընդունվում է Քութայիսի հոգևոր ուսումնարան, իսկ այն ավարտելուց հետո (1904 թ.)՝ տեղիս դասական գիմնազիան, ուր իր կրթությունն էր ստացել նրա ապագա ուսուցիչը՝ անագեմիկոս Ն. Մառը:

Ռուսական արևելագիտության խոշորագույն ներկայացուցիչների ջանքերով Պետերբուրգի համալսարանի Արևելյան ֆակուլտետը դարասկզբին մեծ համարում ունեցող ուսումնական ու գիտական օջախ էր դարձել, գրավելով Անդրեովկասի երիտասարդության ուշագրությունը: Ա. Շանիձեն 1909 թ. ընդունվում է հիշյալ ֆակուլտետը՝ իբրև մասնագիտություն ընտրելով հայ-վրացական բանասիրությունը:

Րվ. Ջավախիշվիլու գլխավորությամբ վրաց ուսանողությունը նախանձախնդիր էր հայրենի երկրի պատմության, մատենագրության ու մշակույթի ուսումնասիրությանը, նշանակալի մտահոգություն ցուցաբերելով նաև քաղաքական անցուղարձերի ու Վրաստանի կացության վերաբերմամբ: Հին ու նոր լեզուներ ուսումնասիրելու, պատմա-մշակութային հարցեր արծարծելու աներկբա կարողություն ունեցող Ա. Շանիձեն, ուսումնառությանը զուգընթաց, դառնում է իր երկրորդ ուսուցչի՝ Իվ. Ջավախիշվիլու աշակիցն ու գործակիցը:

Այդ տարիներին նոր-նոր սկսում էր ձևավորվել վրացագիտության կարևորագույն բնագավառներից մեկը՝ լեզվաբանությունը, ուսումնասիրության ոլորտ ընգրկելով, բացի դրավոր վրացերենից, վրացական բարբառներն ու խոսվածքները, ինչպես նաև այսօր Լաւրվելւսկան լեզվախումբ անունը կրող լեզուները: 1911 թ. Ա. Շանիձեն գործուղվում է Փշավ-Խևսուրեթ՝ բարբառագիտական հետազոտությունների Թե որքան արգյունավետ է եղել տեղում աշխատելու այդ շրջանը՝ կարելի է դատել բարբառագիտական, ստուգաբանական և բանահյուսական այն բաղմաթիվ հրապարակումներով, որ տասնամյակների ընթացքում իրականացրել է գիտնականը: Երեք տարի անց, արդեն իբրև հայ-վրացական բանասիրության ամբիոնի պրոֆեսորության պատրաստվող մասնագետ, Ա. Շանիձեն գործուղվում է Հայաստան՝ Էջմիածնի մատենադարանում «Նրդ երգոցի» գրագրերին ծանոթանալու և առհասարակ հայկական ձեռագրագիտության, լեզվը ու հնագրության մեջ հմտանալու: Հանգամանքների բերումով, երիտասարդ կովկասագետը որոշ ժամանակ մնում է Ալեքսանդրապոլում և ջանում սովորել ժամանակակից հայերենը:

լեզվի քերականություն»², «Վրաց քերականության հիմունքներ»³ և «Հին վրացերենի քերականություն»⁴ հիմնարար աշխատությունները փաստորեն սահմանում են վրացերենին բնորոշ բոլոր քերականական երևույթներն ու օրինաչափությունները, միաժամանակ մենագրական նոր ուսումնասիրությունների դուռ բացելով ու ճանապարհ մատնացուցելով: Նախ ասենք, որ Շանիձեն ինքն է այդ աշխատություններում կիրառված և վրացագրություն մեջ առհասարակ գործածություն ստացած հարյուրավոր տերմինների ստեղծողն ու սահմանողը, ավանդական քերականական դրականությունից միայն անվերապահորեն հաջողվածները վերցնելով: Գիտականի տեսական ընդհանրացումների համընդհանուր ճանաչումը, մեր համոզմամբ, արդյունք է նաև այն իրողության, որ նրանց հեղինակը ելնում է իր իսկ կողմից ստուգված և կիրառությամբ վկայված փաստերի հանրագումարից, աննկատ չթողնելով գրեթե ոչ մի նշանակալի հուշարձան ու վրացալեզու հիշատակարան:



Վրաց լեզվի պատմության դիտական պարբերացման և նրա քերականական արտահայտման ճշգրտման շնորհիվ Ա. Շանիձեն մշակեց միջնադարյան բնագրերի հրատարակության եայուն սկզբունքներ: Նրա խմբագրությամբ, շատ հաճախ էլ աշխատասիրությամբ, հիմնվեց երկու մատենաշար՝ «Հին վրացերեն լեզվի հուշարձաններ»⁵ և «Հին վրացերենի ամբիոնի աշխատություններ»⁶, որոնք նոր պայմաններում ու ակնառու հաջողությամբ շարունակեցին ակադ. Ն. Մառի հիմնած «Тексты и разыскания по армяно-грузинской филологии» և «Bibliotheca Armeno-Georgica» մատենաշարերը: Հիշյալ վերտառությունները կրող տասնյակ հատորներ են լույս տեսել, ընդ որում՝ յուրաքանչյուր բնադիր ճշգրտված է իր գոյացման շրջանի լեզվական-քերականական նորմերին համապատասխան, անհրաժեշտության դեպքում՝ քերականագիտական ուսումնասիրությամբ ու բացատրանկով: Ա. Շանիձեն իրավացիորեն խուսափում է հին հուշարձանների ձեռագրական նշանա-

² «ქართული ენის გრამატიკა». 1, მორფოლოგია (ხრტირე ზრათარაკიქილენ), თბ., 1962.

³ «ქართული გრამატიკის სათუძვლავი». 1, მორფოლოგია, თბ., 1953. ხრტილ აշխատილქილენენ ლ. ზსთაყაილმ վხრარათარაკიქელ ლნ.

⁴ «ძველი ქართული ენის გრამატიკა», თბ., 1976.

⁵ «ძველი ქართული ენის ძეგლები».

⁶ «ძველი ქართული ენის კათედრის შრომები».

⁷ Առաջին մատենաշարով լույս է տեսել 16 հատոր, հրկրորդով՝ 18:

կաղմում, որ իբրև հեղինակի «Աշխատությունների» երկրորդ գիրք լույս տեսավ 1966 թ.՝ «Ընձենավորի հարցեր» խորագրով¹⁴:

Ա. Շանիձեի ուսումնասիրած ու հրապարակած բնագրերի շարքում նշանակալի է Դրեհոր Բակուրյանի «Սահմանքի» վրացերեն խմբագրությունը (1971 թ.), ընդարձակ ուսումնասիրությամբ, բառարանով ու ոտներեն թարգմանությամբ¹⁵: Անկախ առանձին գրույթների, տերմինների ու նրանց նախնականության, ինչպես նաև Բակուրյանի շուրջ ունեցած մեր տարակարծության, հիշյալ հրապարակումը գուրա է դալիս վրացագիտության սահմաններից ու ակներև նպաստ բերում բյուզանդագիտությանն ու հայագիտությանը:

Ինչպես արգեն ասվեց, Ա. Շանիձեն Ն. Մառի, Ն. Ադոնցի, Իվ. Զավախիշվիլու ղեկավարությամբ Պետերբուրգում ստացել է հիմնավոր հայագիտական կրթություն, ուստի իր գիտական աշխատանքների ընթացքում հաճախ է արձարժել զուտ հայագիտական կամ նաև հայագիտական խնդիրներ: Դեռևս 1916 թ. լույս ընծայած «Два чанс-мегрельских суффикса в грузинском и армянском языках»¹⁶ հոդվածում երիասարգ գիտնականը, հակառակ ավանդական հնդեվրոպական լեզվաբանության, «ուր» ճյուղին պատկանող հայկական բարբառների սահմանական ներկան կաղմելու ձևաբանական ցուցիչը համեմատում է քարթվելական լեզուների ընձևած նյութի հետ և ապացուցում մինչ այդ չգիտված ընդհանրություն: Նա պատահական է համարում «ուր» բայածանցի և ներդոյական հոլովի «ուր» վերջածանցի զուգադիպումը, վերջինս սերելով «մեջ»-ից: Հանգուցյալ ակադ. Ա. Ղարիբյանի աշխատության կապակցությամբ դրված դրախոսականում ես կան բարբառագիտական բազմաթիվ ուշագրամ դիտարկումներ ու նորույթներ, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց նշանակությունը:

Պատմա-բանասիրական բնույթի և հայագիտական կարևորություն ունեցող աշխատանքների մասին խոսելիս անհրաժեշտ է հիշատակել Կոշի և Բարանայի վրացերեն արձանագրությունների քննությունն ու հրապարակումը, ուր հեղինակին պատշաճ հմտությամբ լուսաբանված են սլավոնական խնդիրներ, մասնավորապես Կոշի վիմագրի առիթով¹⁷: Իվանե Նրկայնաբազուկի և նրա կնոջ արձանագիր-արտոնագրում կան հարկային տերմիններ, որոնց քննությունը նոր նյութ է տալիս Հայաստանի ու Վրաստանի տնտեսական պատմության վրա լույս ընծայողներին: 1924 թ. գիտարշավի ժամանակ լրանվելով Հայաստանում, Ա. Շանիձեն մասնավոր ուշադրություն է դարձնում վիմագիր աղբյուրներին: Վիմագրագիտության աշխատանքի օրինակելի նմուշ է իրանագետ Վ. Փութարիձեի հեղինակակցությամբ Ա. Շանիձեի վերծանած Գրևի 1595 թ.

¹⁴ «ვეფხისტყაოსნის საკითხები», I, «თხზულებანი», ტ. II, თბ., 1966.

¹⁵ «ქართველთა მონასტერი ბუღვარეთში და მისი ტიპიკონი», ტიპიკონის ქართული რედაქცია, თბ., 1971.

¹⁶ «საქართველოს ენის სტრუქტურისა და ისტორიის საკითხები», I, «თხზულებანი», I, თბ., 1957, էջ 24—27.

¹⁷ А. Г. Панидзе, Грузинская надпись XIII века в сел. Кош, «хелн. ინსტ. მოამბე», I, 1959, էջ 7—19. აკაკი შანიძე და ვასო ცისკარიშვილი, ბარანის ციხის წარწერა, «საიუბილეო», თბ., 1968, էջ 17—26. Ի դեպ, նույն գրքում Ա. Շանիձեն հրապարակել է հայաստանում գրված մեկ այլ վրացերեն արձանագրություն՝ «Грузинская надпись XI—XII вв. из Армении» խորագրով (էջ 143—144):

և ռալեղու՝ վրացերեն, հայերեն և պարսկերեն արձանագրությունը, որ վիրահայոց պատմության կարևոր աղբյուրներից մեկն է¹⁸:

Հայկական աղբյուրների քաջ իմացությունը առանձնակի ցայտունությամբ որսևորվեց ազվանական նորահայտ ալբուբենի ուսումնասիրության ժամանակ¹⁹: Կորյունի ու Կաղանկատվացու երկրից, «Գիրք թղթոցից» և այլ աղբյուրներից գիտնականը վստահացել էր, որ անհետ կորած չպիտի լինի առվանական գիրն ու գրչությունը, ուստի հայկական ու վրացական ձեռագրական հավաքածոներում նա հետամուտ էր ազվանական գրի հայտնաբերմանը: Նրա հորդորով ու վերագրիտությամբ էր, որ պրոֆ. Ր. Աբուլաձեն պրպտեց Մատենադարանում պահպանված և այժմ գիտությանը հանրածանոթ հայերեն ձեռագիր ժողովածուն: Հին ու նոր լեզուների իմացությունը, լեզվաբանի ու մատենագրության պատմաբանի խորատեսությունը, հնագրագետի մանրակրկիտությունը և այլ պարագաներ իրենց գումարումով հնարավոր դարձրին կովկասագիտության նոր բնագավառի՝ ազվանագիտության գիտական ձևավորումը: Պրոֆ. Ա. Շանիձեի ծանրակշիռ ազվանագիտական վաստակը, նրա այլ վաստակների հետ միաժամանակ, մեծապես պարտավորեցնում են մեր օրերի կոմունասագետին: Հնդ որում, այս բնագավառում էլ գիտնականի ստացած արդյունքը տեական պրպտումներով է պայմանավորված: Ազվանագիտական նոր նյութեր երևան բերելու պահանջով էր, որ նա ձեռնամուխ եղավ Մյունխենի հայերեն ձեռագրերից մեկի հիշատակագրության վերծանությանը: Պարզվեց, որ ազվանական գիտված հիշյալ գրառումը իրականում հայերեն ծածկագիր հիշատակագրություն է, կատարված Վարչավայում 1674 թ.²⁰:

Ա. Շանիձեն նոր ու շահեկան հրատարակությունների սիրալիր գրախոս է, բայց և դիտողությունների մեջ անզիջում: Վերևում խոսք եղավ հանդուցյալ ակադ. Ա. Վարիբյանի աշխատության գրախոսության մասին, այստեղ կուղենայինք հիշատակել գիտնականի մեկ ուրիշ գրախոսական-հոգվածը՝ նվիրված Դ. Ղիփշիձեի «Пещеры Аппа» աշխատությանը, որ լույս ընծայեց Հայաստանի գիտությունների ակադեմիան²¹: Ա. Շանիձեն գրվատում է պրոֆ. Ն. Տոկարսկու խմբագրած ալդ հրատարակությունը և հիշողություններ պատմում 1914 թ. օգոստոսին Անի կատարած իր այցելության ու այնտեղ կատարվող հնագիտական աշխատանքների մասին: Առհասարակ Ա. Շանիձեն իր անմիջական տպավորությունները ընթերցողի հետ կիսող գիտնական է: Նրա բազմաթիվ հուշագրություն-ուղեգրություններից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Մեսրոպ Մաշտոցի 1600-ամյակին նվիրված ակնարկը՝ «Հայոց աղգային տոնին» խորագրով²²: Վերածնված Հայաստանի հարգանքի տուրքը և հանդիսությունների բնութագիրը ներկայացնելուց

¹⁸ Վ. Մանուկյան, Յ. Գրիգորյան, Սամբուհյան Մանուկյան, «Երևանի մոտ», Ե. V—VI. տ., 1940, էջ 1—11:

¹⁹ «Новооткрытый алфавит Кавказских албанцев и его значение для науки», «Երևանի մոտ», Ե. IV, հայց. I. տ., 1938, էջ 1—88: Հմտ. «Язык и письмо Кавказских албанцев», «Երևան», № 1, 1969, էջ 169—189:

²⁰ «Криптографическая записка в одной армянской рукописи из Мюнхенской коллекции», «ՀՀԿԱ «Տեղեկագիր», 1960, № 9, էջ 91—98:

²¹ Վ. Մանուկյան, Վ. Մանուկյան, «Մանուկյանի ծածկագրեր», 1972, № 7, էջ 16—17:

²² «Նախնային խելոցներ», 1962, № 7, էջ 11—17:

հետո, գիտնականը անդրադառնում է կովկասյան ժողովուրդների այբուբենների նկարագրին ու ստեղծման հանգամանքներին և դրանում, որ երեք այբուբեններն էլ միաժամանակ ու նույնական խելամուծությամբ են ստեղծված:

Մի քանի տարի առաջ արևելագետ Մ. Անդրոնիկաշվիլին վրաց-իրանական լեզվական փոխհարաբերությունների ուսումնասիրությանը նվիրված հատոր հրատարակեց: Հեղինակը տեական ու մանրախուզ պրպտումով բավականաչափ փաստանյալներ նյութեր է գիտական շրջանառության մեջ ստցնում, զասգասում ու քննում դրանք, սակայն երբեմն զանց առնելով կամ անտեսելով այն լեզվական միջնորդ օղակը, որով վրացերենն ու պարսկերենը հարաբերվում են միմյանց: Ա. Շանիձեն չհապաղեց՝ ընդգիմախոսություն-դրախոսականով հանգիս զալու²³: Նորն ու ընդունելին սատարող գիտնականը բազմաթիվ ծանրակշիռ դիտողություններով վերահաստատում է քննարկվող լեզվական փոխառությունների խնդրում հայերենի միջնորդավորող դերը, մանավանդ որ՝ արծարծվող օրինակների մի մասը սոսկ բառական փոխառություն է, այլև սլաոմա-մշակութային աղերս վկայող տերմին-միավոր: Ստուգաբանական և հնչյունաբանական քննության ճանապարհով Ա. Շանիձեն բացահայտում է մի շարք ընդհանրություն-օրինաչափություններ, որոնք նշանակալիորեն կհեշտացնեն հալ-վրաց-իրանական բանասիրությամբ զբաղվող մասնագետների ասելիքը:

Կովկասագիտության վաստանշատ երախաավորը պարզ ու բարեհամբուր խառնվածք ունեցող անձնավորություն է. կատակախոս ու աշխույժ, հանկարծախոս ու նրբանկատ բնավորություն, միշտ պատրաստ գիտական օգնության, միշտ շրջապատված աշակերտներով: Վերջիններիս թվում տարբեր ժամանակներում եղել են և հայագիտության ներկայացուցիչները, երբեմն Հայաստանից դործուղված: Ա. Շանիձեն համբերությամբ ու սիրով շաբաթ մեկ պարապել է նրանց հետ՝ մերթ իր ամբիոնում, մերթ էլ սեփական տանը՝ գիտական պատկառելի այդ գրադարանում: Աշակերտները նրանից են սովորել հարգել գիտական համոզմունքներն ու տարակարծությունները և մանավանդ՝ շմեղանշիլ փաստերից բխող եղրակացության առաջ՝ ոչ ուսուցչին սիրաշահելու և ոչ էլ աշակերտին խնայելու մղումով:

Անվանի կովկասագետի 90-ամյակի առթիվ, ի նշան գիտական գնահատության, ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտը հայերեն թարգմանությունսը հրատարակության է պատրաստել նրա «Հին վրացերենի քերականությունը», որը խթանելու է վրացագիտական ուսումնասիրությունների առաջընթացը մեղանում:

А. Г. ШАНИДЗЕ

(К 90-летию со дня рождения)

Академик АН Арм.ССР С. Т. ЕРЕМЯН, П. М. МУРАДЯН

(Резюме)

Научная общественность нашей страны в текущем году отметила 90-летие со дня рождения выдающегося грузинского ученого, члена-корреспондента АН СССР, академика АН Груз.ССР, профессора Тбилис-

²³ «საბოძოლო», 1975—1981.

ского государственного университета Акакия Гавриловича Шанидзе. Будучи кавказоведом-востоковедом широкого профиля, А. Г. Шанидзе несколько десятилетий возглавляет созданную им самим грузинскую лингвистическую школу. Опубликованные ученым капитальные монографии («Основы грузинской грамматики», «Грамматика древнегрузинского языка» и др.), а также изданные им древнегрузинские памятники (библейские тексты, «Устав Бачковского монастыря», «Многоглав 864 г.» и др.) стали настольными книгами кавказоведов. А. Г. Шанидзе принадлежат также несколько арменоведческих работ, в которых рассматриваются проблемы историко-филологического характера.